

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Է

Ցի. Քի.

Ծոյ. Սիմէօն

Կթղկս. Աղնց.

թ. ՌՃԻԴ (1675 թ.—Ն. Մ.):

Ես յԵրևանցի Սահակի ի Կոստի որդի Աբրիհամը Սարքիսկսի շր ով որ ինչ մաթումն ու հաշիյումս գրած այ վկյ. (կնիք):

Ես Երեվանց Գառբէլի որդի Նիկողոսն Սարգիսի իղրարովն որ հաշիումն իր ղարայ արաւինն որ մաթուն մգրած վկեմ. (կնիք):

(Վերոհիշյալ հայերի վկայություններից բացի կան նաև քառասուն ուրիշ մարդկանց տաճկերեն գրված վկայությունն և յուրաքանչյուրի փոքրիկ կնիքը: Այս կնիքների 14-ը տաճկերեն են, իսկ մնացած 26-ը՝ հայերեն: Հայկական այս կնիքների ընթեռնելի մասը տրվում է ստորև):

Սահակ գոհալիս:

Քի. Ծյ. ...:

Աղա Աբրի:

..... Հոոմ:

Քի. Ծռ. Սիմոն:

..... Ոսկան:

Ծոյ. Այ. Ցակոբ:

Ց. ծռ. Քի. Աղայմալ:

Ալի բէկ:

Քի. ծոյ. Ատիր:

Քի. ծռ. Առաքել:

Մընացական:

Այ. ծռ. Տր. Հանես .....:

Քի. ծոյ. Արիամի որ. Ովանէ(ս):

Քի. ծռ. Աբրահամ:

Ասլիբէկ Արիոու (?):

..... Թիման:

..... Ցաջիջ:

Բաղտասարի որդի Վարդ(ան):

Քի. ծռ. Եղիազար:

Քի. ծռ. Մկրտում:

(Վերոհիշյալ բոլոր կնիքները սև թանաքով են կնքված, բացի Աղվանից Սիմեոն կաթողիկոսինը, որ կարմիր է):

(Ձեռագիր կալվածագրի կոնակում գրված է հետևյալը)

ՅԵրևանցի Սէթէնց Ցակոբի մլքի ղապալէն է, որ Սրբոյ Էջմիածնայ ախորապէտ տվել Ապարանու Նորակէճու տաճկին .... ՌՃԹ-ին (1660 թ.—Ն. Մ.)

(Ներքևում կա 19 տողանոց ռուսերեն մի գրություն 1839 թվականի և չորս ստորագրություն):

№ 460

ՀԱՒԱՔԱԾՈՒ

Թերթերը՝ 30:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 17,6×11,2 սմ.:— **Նյութը՝** դիմացկուն հաստ թուղթ: —**Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Դասարկ թղթերը՝** 20ա—30ա:— **Տողերը՝** 29:— **Գլծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի: Ձեռագրում կպցված է միայն տպագիր օրացույցի նկարներից մի քանիսը: —**Գրիչը՝** Արկադեոս վարժապետ Արարատյան:— **Ժամանակը՝** 1882 թ.:— **Վայրը՝** Տփխիս (Թիֆլիզ): —**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետն ստացել է նվեր ներքին թեմերից մեկից և այն հանձնել Մայր Աթոռի Ձեռագրատուն 1976 թ. հունվարի 24-ին:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977 թվականի № № Գ—Ը-ից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը պարունակում է Վենետիկում և Թիֆլիզում տպված հայկական օրացույցներից մի շարք ոտանավորներ և բանաստեղծություններ:

Մի քանի էջերում կպցված են այդ տպագիր օրացույցներից պոկված մի շարք թերթեր, որոնց մեկ մասը նկարներ են, իսկ մյուս մասն էլ ոտանավորներ: Այս էջերը հետևյալներն են:

Թթ. 1բ, 3բ, 5ա, 5բ, 7բ, 9բ, 10ա, 10բ 11ա, 11բ, 12ա, 12բ, 14ա և 30բ:

Այս տպագիր թերթերը պոկված են 1848, 1850, 1856, 1859, 1860, 1875 և 1882 թվականների օրացույցներից, որոնց ամեն մի թերթը փոքր (9×5 սմ.) չափեր ունի:

Ստորև տրվում է ձեռագիր ոտանավորների վերնագրերը միայն.

Թ. 2ա.—Այգ և մանկութիւն:

Թ. 2բ.—Ամբ քո ոչ անցանեն:

Թ. 3ա.—Անցանէ և այդ:

Թ. 4ա.—Եղանակք տարւոյ.

Մանուկ էի և ծերացայ:

Թ. 6ա.—Ժամանակ:

Թ. 8ա.—Առաւստու աղօթք մեր հանոյացին Քեզ: Շարական:

Թ. 8բ.—Գեղ բնութեան:

Թ. 12բ.—Ցոր:

Թ. 13ա.—«Երանի մեռելոց, որք ի Տէր ննջեցին»:

Թ. 14բ.—Հրեշտակ Տեառն ի բաց թաւալեցոյց զվէմն և նստէր ի վերայ նորա: Մատթ. ԻԸ:

Թ. 15ա.—Միութիւն:

Թ. 16բ.—Յորդորակ:

Թ. 17բ.—Քակեցից զշտեմարանս իմ, և ես մեծամեծս շինեցից և անդր ժողովեցից զցորեան և զամենայն բարութիւնս իմ: Դուկ. ԺԲ. 18:

Թ. 18բ.—1860 տարւոյ Տփխիսատիպ օրացոյցն առ հայկազեանս:

Թ. 19ա.—Յետինք տարւոյն:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Ճեմելիք բանաւոր
ծաղկանց
Փնջեալ սիրով ի տարեկան օրացու-
ցից Մխիթարեան (և այլոց
Այբբէնական կարգաւ-
այս չորս բառերը ջնջված են հետագայում—Ն. Մ.)
Ի պէտս սիրողաց զգրաբառական լեզու
Հայոց յամսեանն Փետրվարի
1882 ամի
ի Տփխիս
Արկադէոս վարժապետ Արարատեան:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 9բ.—1859:

Յօրացոյց Մխի(թարեան) 1860 տարւոյ:

Թ. 10ա.—1850 Վենետ(իկ):

Թ. 11ա.—1856:

Թ. 14ա.—1848 թուին:

Թ. 30բ.—Իմաստ. Սողոմոնի Գլ. Է, համար ե:

(Ձեռագրում կա մի փոքրիկ թղթակտոր, որի վրա գրված է)

Ստացական

Շնորհակալությամբ ստացված է Արատովից:

№ 461

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 272:— **Գրակները՝** 23, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա—1՝ 6, Ա—2՝ 16, ԻԱ՝ 10:— **Մեծությունը՝** 14,5×10,5×5 սմ.:— **Նյութը՝** սպիտակ, մարմար և բարակ մագաղաթ:— **Կազմը՝** ոսկեջրած արծաթապատ տախտակ, որ հայ արծաթագործության հիանալի մի նմուշ է: Կազմի առաջին երեսին փորագրված է խաչված Հիսուսը, որի աջ կողմից արյուն է հոսում, երկու կողմում կան մեկական սրբեր (մեկը Մարիամն է), կոնակում՝ մի շենք, ուրի տակը՝ մանը պատկերացնող մի զանգ, գլխավերևում՝ արևն ու լուսինը, իսկ խաչի վերևի ծայրամասում կա հետևյալ գրությունը «Ասէթից» (որ հավանաբար նշանակում է «Այս է թագավոր հրեից»): Կազմի կոնակի երեսին փորագրված է բացված գերեզմանից հարություն առած Փրկիչը, որ ձախ ձեռքով բռնած է խաչի ձողափայտը: Կազմն սկզբնական շրջանում ունեցել է արծաթյա երկու բռնիչ, որոնք ընկել են:— **Պանպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** շատ լավ:— **Գրությունը՝** երկսյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13ա, 14բ, 15ա, 16բ, 17ա, 18բ, 19ա, 20բ, 21ա, 22բ, 23ա, 23բ, 24ա, 25բ, 26ա, 27բ, 28ա, 29բ, 30ա, 31բ, 32ա, 33բ, 36բ, 37ա, 101ա, 269ա—272բ:— **Տողերը՝** 25:— **Գծումները՝** ճշգրտությամբ:— **Գիրը՝** մանր բոլորգիր:— **Զարդագրությունը՝** ձեռագիրը հանդիսանում է 17-րդ դարի հայկական մանրանկարչության մի գոհարը, իր շատ արժեքավոր նկարներով: Չորս ավետարանիչների գեղեցիկ նկարները գտնվում են 37բ, 101բ, 144բ և 215բ էջերում: Կան բազմաթիվ շատ գեղեցիկ տերունական նկարներ՝ 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 13բ, 14ա, 15բ, 16ա, 17բ, 18ա, 19բ, 20ա, 21բ, 22ա: Կան հիանալի խորաններ՝ 24բ, 25ա, 26բ, 27ա, 28բ, 29ա, 30բ, 31ա, 32բ, 33ա, ինչպես նաև սքանչելի չորս գլխազարդեր՝ 38ա, 102ա, 145ա, 216ա: Սրանցից բացի ձեռագիրն ունի գեղեցիկ բազմաթիվ զարդագրեր, թոչնագրեր (38ա, 102ա, 145ա, 216ա), գազանագրեր (102ա, 145ա), մարդագիր (38ա), նաև բազմաթիվ մարդեր (սրբեր, հրեշտակներ, մանուկներ, կանայք, սատանա), կենդանիներ (կապիկ, սիրամարգ, հավ և այլ թոչուններ), ծառեր, ծաղիկներ, գմբեթներ, զարդանկարներ և լուսանցազարդեր: Այս բոլոր նկարներում օգտագործված են բազմաթիվ գույներ՝ այսպես օրինակի համար ոսկեգույն (տեսարաններում երկինքը միշտ ոսկեգույնով է ներկայացված), որդան կարմիր և կարմրի այլ երանգներ, կանաչ, վարդա-

գույն, դեղին, բաց և մուգ կապույտ, ինչպես նաև զանազան այլ գույներ տարբեր տեսակի երանգներով:— **Գրիչը՝** Գրիգոր երեց:— **Պատվիրատուն՝** Խարբերդցի մահտեսի Աստվածատուր:— **Ծաղկողը՝** Խաչատուր երեց:— **Ժամանակը՝** 1641 թ.:— **Վայրը՝** Քեոթահիա (Թուրքիա):— **Նանոթություն՝** մագաղաթյա սույն շատ արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացվել Երուսաղեմի պատրիարք Տ. Եղիշե Սրբազանից 1975 թ. հունիս ամսին, Վեհափառ Հայրապետի Երուսաղեմ կատարած այցելության առթիվ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 144ա.—Փառք փրկչին և յիշատակ գրչին, ՆԱԲ (երեք մեծատառեր գրված կապգրով):

Թ. 215ա.—Յովհաննէս հնազանդութիւն: Աւրհնութիւն որ կարդայ՝ գովութիւն որ լսէ: Փառք տուողին և յիշատակ գրչիս, ամէն:

Թ. 267ա.—Այս բանս յ ձգ համարքն է: Թէ կամիս գրել զաս ի կարգն՝ զկնի այնմ բանի թէ քննեա և տես զի մարգարէ ի Գալիլեէ ոչ յառնէ: Պալէ աւսալ ումեմն աշակերտին Յովհաննու է գրած, որ յետոյ հերձուած խաւսեցաւ և խոտեցաւ Եւսեբիէ յասել զայս՝ յետոյ են գրել:

Թ. 267բ.—Փառք անսկիզբն և անզուգական, անեղական, անայլայլական, միասնական, անտանելի, անքննելի, անհասանելի, անիմանալի, անպարագրելի, աներբ, անուր, անորակ, անքանակ, անբաժանելի սուրբ երրորդութեանն, յաւիտեանս յաւիտենից ամէն:

Իսկ է չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ իմն տեսանի, իբր չորք անկիւնս արարածոցս աշխարհիս և իբր մշտահոս չորս գետս յադինականն և այլ նման չորից կենդանեաց ըստ տեսլեան Եզեկիէլի, այլ և նման չորից նիւթից (Թ. 268ա) զգալի տարրաց, որ շարմանեալ միութեամբ զգալեաւ միջնորդութեամբ հոգի ընկալութեամբ կենդանի մարդ բանական ցուցեալ՝ սոյնպէս չորս աւետարանացս միաբան հոգէկրութեամբ հոգովն սրբով զբանս աստուածային զմարդեղութեանն յայտնեալ ծանուցին կենդանութիւն ամենայն աշխարհի ըստ այնմես իսկ եմ յարութիւն և կեանք՝ և որ հաւատայ յիս մի մեռցի ի յաւիտեան: Այսպէս յաւետ կենդանութիւն աւետարան կոչեցաւ սուրբ գիրքս այս:

Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքն Քոթահեայ, ի թվաբերութեանս Աստանազեան և Աբեթական տաւմարի ՌՂ (=1641 թ.), ձեռամբ մեղապարտ և անարժան Գրիգոր երիցու՝ ի յստոյգ և յընտիր օրինակէ՝ ի խնդրոյ աստուածարեալ և հոգիաւէր խարբերդցի մահդասի Աստուածատուրին, որ մեծաւ փափագանօք և սրտաջան յօժարութեամբ, քաջահաւատ յուսով ետ գրել զսուրբ աւետարանս, ի փրկութիւն կենաց հոգոց և ի լուսաւորութիւն հոգւոյ հօրոյ, յիշատակ իւր և ծնաւղաց հօրոց՝ մահդասի Մելքոնին և Գոհարին, և եղբարցն Խօջանանին և Հրմուզին. և քուերն Աղապակէ, և կողակցին Ազիզին, և մեծ պապուն Կարապետին, և մեծ մամուն Կուլչիչէկին, և հօրեղբարցն Պալիին և Պաղտա(Թ. 268բ)սարին, և որդւոյն Մուրատպալիին, և դստերն Մուլքիին, և քուեր որդւոյն Սաֆարին և զոքանչին մահդասի Մարիամին և ամենայն արեան մերձաւորաց իւրոց, կենդանեաց և ննջեցելոց, և եդ յիշատակ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սուրբ Յակոբայ, ի ձեռն Տէր Գրիգոր հայրապետին: Գանձ յաւիտենական և անկապուտ ճոխութիւն, ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, և յուրախութիւն ուխտի մանկանց նազելի մօր մերոյ նոր Սիովնի: Արդ աղաչեմ զսրբազան և զաստուածամերձ դասըս քահանայիցդ՝ որք ընթեռնուք կամ աւրինակէք, յիշեսջիք սրտի մտաւք զմեղապարտ գրիչս և զծնաւղսն իմ և զամենայն արեան մերձաւորսն իմ, նաև զըստացող սուրբ աւետարանիս զմահդասի Աստուածատուրն և զծնաւղսն իւր և զամենայն արեան մերձաւորսն իւր: Դարձեալ յիշեցէք յաղաւթս ձեր զԽաչատուր երէցն որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ սուրբ աւետարանիս, և որ յիշեն յիշեալ լիցին առաջի ահեղ ատենին Քրիստոսի, ուր բանք սպասին և գործք թագաւորին առաջի արդար դատաւորին Քրիստոսի ամէն, և որ հաւատով ամէն ասասցէ, և նմա ողորմեսցի Քրիստոս յիւր միւս անգամ գալստեանն, ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի վրա երկու սպիտակ պիտակի վրա գըրված է հետևյալ թվերը)

68 № 2623

2623

(Ըստ երևույթին այս համարը պատկանում է Երուսաղեմի մատենադարանին):

(Կազմի ներսի կողմից ևս կա մի պիտակ, որի վրա գրված է)

68

2623:

Թ. 6բ.—Սրտագին նուէր

Նորին Ս. Օծութեան

Վազգէն Ա. Կաթողիկոսին ամենայն հայոց

Երուսաղէմի Պատրիարք

Եղիշէ Սրբազանին կողմէ

խոնարհ որդի

աղօթարար

Եղիշէ արքեպ. Տէրտէրեան

30 Յունիս 75

Երուսաղէմ:

(Նանոթություն—Արժեքավոր սույն ձեռագրի հիշատակարանը տրված է հետևյալ գրքում՝ Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 31—2, տես Աստուածատուր (մհտ.) Խարբերդցի):

№ 462

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 338:— **Պրակները՝** 41, յուրաքանչյուրը 8-ական թերթից, բացի ԺԵ և ԻԲ պրակները, որոնք 9-ական, ԼԳ՝ 10 և Գ՝ 12 թերթից են:— **Մեծությու-**

նը՝ 16,5×10,5×5,5 սմ.։— **Նյութը**՝ երբեմն բարակ և երբեմն էլ հաստ դեղնած մագաղաթ։— **Կազմը**՝ ընկել և կորել է։— **Պահպանակները**՝ սկզբում և վերջում երկուական թերթ մագաղաթ։— **Վիճակը**՝ բավարար։— **Գրությունը**՝ երկսյուն։— **Դատարկ թղթերը**՝ սկզբի պահպանակի չորս էջերը, ապա 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13ա, 14բ, 15ա, 16բ, 17ա, 18բ, 19ա, 20բ, 21ա, 22բ, 23ա, 24բ, 25ա, 26բ, 30ա, 119ա, 176ա, 338ա և 339բ։— **Տողերը**՝ 20։— **Գծումները**՝ ճնշումով։— **Գիրը**՝ բոլորգիր։— **Զարդագրություն**՝ սույն ձեռագիրը մի գեղեցիկ նմուշ է Կոստանդնուպոլսի 17-րդ դարասկզբի մանրանկարչական դպրոցի։ Այն արվեստի գեղեցիկ մի գործ է։ Ունի բազմաթիվ սիրուն նկարներ, այսպես օրինակի համար տերունական նկարներ՝ 1բ, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 13բ, 14ա, 15բ և 16ա, խորաններ՝ 17բ և 18ա, համաբարբառներ՝ 19բ, 20ա, 21բ, 22ա, 23բ, 24ա, 25բ և 26ա, չորս ավետարանիչների նկարները՝ 30բ, 119բ, 176բ և 266բ, գլխազարդեր՝ 31ա, 120ա, 177ա և 267ա։ Բացի այդ ձեռագրում կան բազմաթիվ գեղեցիկ լուսանցազարդեր, ծառեր, ծաղիկներ, թռչուններ, խաչեր, հրեշտակներ և զարդեր։ Ձեռագիրն ունի սիրուն թռչնագրեր, զարդագրեր, մարդագրեր, գազանագրեր և ձկնագրեր։ Այս նկարների համար օգտագործված են բազմաթիվ գույներ, այսպես օրինակի համար որդան կարմիրը, ոսկեգույնը, կապույտը, կարմիրը, կանաչը, դեղինը և մի շարք այլ գույներ բազմաթիվ երանգներով։— **Գրիչը**՝ Ավետիս։— **Պատվիրատուն**՝ Ճահնազար, Գողթն գավառի Ագուլիս գյուղաքաղաքից։ **Ծաղկողը**՝ անհայտ։— **Ժամանակը**՝ 1619 թ.։— **Վայրը**՝ Կոստանդնուպոլիս։— **Ծանոթություն**՝ սույն արժեքավոր ձեռագիրը գնվել է թբիլիսաբնակ մի հայրենակցից։ Վեհափառ Հայրապետը գրչագիրը ձեռագրատուն հանձնեց 1976 թ. դեկտեմբերի 11-ին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 336ա.—Փառք անսկիզբն անեղէին և անմահին և անսահմանէացուցչին ի բոլոր էիցս հանցուք ածին և փառք հաւր և որդոյ և հոգոյն սրբոյ։ Իսկ է չորից աւետարանաց խորհուրդ բազմարինակ իմն տեսանի. իբր չորք անկիւնս արարածոցս աշխարհիս և իբր մշտահոս գետս յաղենականս և այլ նման չորից կենդանեաց ըստ տեսլեան Եզեկիելի. այլ և նման չորից նիւթից զգալի տարրաց. որ շարմանեալ միութեամբ զգալեաւ միջնորդութեամբ. հոգի ընկալութեամբ կենդանի մարդ բանական ցուցեալ. սոյնպէս չորս աւետարանչացս միաբան հոգէկրութեամբ հոգովն սրբով զբանն աստուածային զմարդեղութեանն յայտնեալ ծանուցին կենդանութիւն ամենայն աշխարհի, ըստ այնմ ես իսկ եմ յարութիւն և կեանք, և որ հաւատայ յիս մի մեռցի յաւիտեան։

Այսպէս յաւետ կենդանութիւն աւետարանելով աւետարան, կոչեցաւ սուրբ գիրքս այս։ Արդ (գրե) գրեցաւ սա ի թուաբերութիւն հայոց ՌԿԸ(1619 թ.—Ն. Մ.), ի քաղաքն ըՍտամպաւլ, ի դուռն Սուրբ Նիկողայոսի, ի դպրատան ումեմն մե(թ. 336բ)ղապարտի, ձեռամբ աշակերտիս. ծառայ սուրբ աւետարանիս, անուամբս Աւետիս։ Արդ աղաչեմ զամենեսեան որ հանդիպիք սմա, յիշեցէք աղաւթս ձեր զծնաւղս իմ և զերախտաւոր վարդապետ իմ, որ բազում երախտիք և աշխատանք ունի ի վերայ իմ։ Եւ այլ յիշեցէք զվերջի ստացող սուրբ աւետարանիս զՃահնազարս, որ ստացայ ի թուաբերութեան արամեանս տոհմի, քսան և երկու յոբելինի և միակ եթն և տասնեկի (1668 թ. ?—Ն. Մ.), վերստին և կրկնակի նորակերտ զարդարեալ նորոգեցի աւետալի և անշուշտ տուփս տէրունեան, որ գերազանցեալ յորջորջի աւետարան, զի ըստ նախկի և առաջին գաղափարին թերի և պակաս լինելոյն համանգամայնաց ըմբութեանցն, որոյ զտնօրինականսն վեշտասայն լուսապատշաճի և ըստ խորհրդեան։ Ընդ նմին և զհամաբարբառսն՝ որ կարի և հարկաւոր պիտանաւորութեան եդի ընդ նմա ի տուփս (թ. 337ա) տէրունեան և զկատարմնութեան համաբարբառոյն թէ ոյք են բանեցունց գլխոցն համաձայնութիւն և կամ տարաձայն միմեանց, և թէ որքանութիւն թուոցն համարանըշանագրաց՝ և այլոց։ Վասն որոյ մեծաւ ջանիւ և յոյժ աշխատանօք՝ կարի զարդարուն և գեղեցիկ յօրինուածով կատարեալ հաստատեցի ի սոյն տեղի՝ որպէս և տեսանէք իսկ։ Եւ այսու լցի զիղձ և զփափագ սրտի իմոյ ես Ճահնազարս չընչին՝ որ յորջորջեցայ Շմաւոն սարկաւագ՝ մեղաց պարտական, ի Հաւառէն Գողթնայ, և ի գիւղաքաղաքէն Ագուլեաց, առ ի յստացումն իմ և յիշատակ ինձ և ի վայելումն ժառանգցին իմոյ. սիրելի և հարազատ անդրանկին իմ Դաւթի։ Վասն որոյ յոյժ կողկողագին և մեծաւ պաղատանաւք աղաչեմ և աղերսեմ զվերծանօղսդ և զգաղափարօղսդ (թ. 337բ) որք հանդիպիք սմա լիալիր սրտիւ և սուրբ բերանով արժանիս արասջիք ողորմութեան զիս զանարժան բազմամեղ Ճահնազարս, և զծնօղքն իմ զՀայրապետն, և զԽանաղէն, և զեղբայրն իմ զՀախնազարն, և զհարազատ քոյրն իմ զԲէկաղէն, և զայրն իւր զպարոն Զաքարէն, և զկենակիցն իմ զՆազլուն, և զանդրանիկ որդեակն իմ զԴաւիթն, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, և զկրտսեր որդին իմ զԶօրաբարեկն՝ որ մանուկ տիօք փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն, և զայլ ամենայն արենառու մերձաւորքն իմ զկենդանիս և զննջեցեալսն յիշեսջիք ի Քրիստոս։ Եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, յորժամ գայցէ փառօք Հօր նորոգել զպատկեր խնամրհութեան մերոյ։ Որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։ Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անու(ն քո)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 336ա.—Գրված է 334 տարի մեր թվից առաջ։

№ 463
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 291։— **Պրակները՝** 24, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԺԴ՝ 10, ԻԳ՝ 11 և Ա—1՝ 19 թերթից են։— **Մեծությունը՝** 26,5×19×7 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ։— **Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի կաշին տեղ-տեղ պոկված է։ Սկզբում եղել են երեք բռնիչներ, որոնց երկուսն ընկել են։ Կազմի սկզբում կաշվի վրա ննշումով մեծ խաչ է նկարված, իսկ կռնակում՝ վարդեր։— **Պահպանակները՝** ձեռագրի սկզբում կա երեք թերթ մագաղաթ, որոնց 3-րդ թերթը հետագայում կտրված և հանված է, սակայն կարի մոտ մնացած շուրջ մեկ սանտիմետրանոց մագաղաթի ամբողջ երկայնությամբ կա մանր երկաթագրով գրված մեկական տող գրություն թերթի երկու երեսում։ Հավանաբար 9—10-րդ դարերի մագաղաթ է սա։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** երկսյուն։— **Դատարկ թղթերը՝** 94ա, 290ա, 291ա և 291բ։— **Տողերը** 21—25։— **Գծումները՝** ննշումով։— **Գիրը՝** բոլորգիր։— **Զարդագրություն՝** ձեռագրի մանրանկարչությունը պատկանում է Գանձասարի դպրոցի միջնադարյան արվեստին, որը միևնույն ժամանակ գեղեցիկ մի նմուշ է։ Ձեռագիրն ունի Ադամ և Եվայի նկարը (2բ) և Տերունական նկարներ (3ա, 3բ, 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա, 6բ, 7ա, 7բ, 8ա, 8բ, 9ա, 9բ, 10ա, 10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ և 13ա)։ Կան նաև բազմաթիվ խորաններ (13բ, 14ա, 14բ, 15ա, 15բ, 16ա, 16բ, 17ա, 17բ և 18ա), գլխազարդեր (20ա, 95ա, 146ա և 227ա) և ավետարանիչներ (94բ, 145բ և 226բ)։ Արժեքավոր ձեռագիրն ունի հրեշտակագիր (20ա), թռչնագիր (20ա և 227ա), գազանագիր (95ա), կենդանագիր (146ա), ինչպես նաև բազմաթիվ զարդագրեր, լուսանցազարդեր, թռչուններ, խաչեր, գմբեթներ, սրբեր և հրեշտակներ։— **Գրիչը՝** Հայրապետ աբեղա։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ծաղկողները՝** նույնինքն գրիչը՝ Հայրապետ աբեղան և եղբայրը՝ Նահապետ քահանա։—**Ժամանակը՝** 1563 թ.։— **Վայրը՝** Վակունիս գավառի Հովատուս գյուղ։— **Ծանոթություն՝** սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացվել Ղարաբաղից։ Վեհափառ Հայրապետը գրչագիրը ձեռագրատուն հանձնեց 1976 թ. դեկտեմբերի 11-ին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 10բ.—(Գրչի և ծաղկողի ինքնանկարը) Հայր[ա]պ[ե]տ աբեղան։ (Գրչի եղբոր նկարը) Նահ[ա]պ[ե]տ ք[ա]հ[ա]նան։

ԶՀայրապետ նկարաւղս յիշեցէք ի Քրիստոս Աստուած զձեզ յիշէ. թվ. ՌԺԶ (1567 թ.—Ն. Մ.)։

Թ. 13բ.—... և զմեղաւ որ Հայրապետ աբեղէս յիշեայ։

Թ. 14ա.—ԶՀայրապետ եղկելիս գծողս և զծնաւղսըն յիշեցէք և Աստուած յիշողացն ողորմեսցի ի գալըստեան իւր յամէն։ Թվս. ՌԺԶ է։

Թ. 19բ.—Զնկարաւղ Աւետարանիս Հայրապետ աբեղէս և եղ(բ)այր իմ Նահապետ քահանայ, և իւր որդին փոքրիկ Գրիգորն յիշեցէք ի Քրիստոս Աստուած զձեզ յիշէ իւր արքայութիւնն, ամէն թվ. ՌԾԷ (1608 թ.—Ն. Մ.)։

Թ. 91բ.—... Նորին աղաւթիցն սկսա և ողորմութեամբ Աստուծոյ կատարեցաւ Սուրբ Աւետարանս Փրկչին մերո(յ) Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։

Արդ գրեցաւ ի ձեռամբ Հայրապետ աբեղայի, անարժան և ան(ի)մաստ գրչի. գիրեցի զՍուրբ Աւետարանս յիշատակ ինձ և եղբաւր իմոյ Նահապետ քահանային, և ծնողացն իմ Համանին, և հաւրն իմ Խասիկին, և միւս եղբարցն իմ Կոստանդին, և Թորոսին, և Ամիրին, և Գուլամիրին, և միւս մաւրն Մարիանին, և քվերացն իմոյ Փաշին, և Մարիանին, և Խոնտաղին, և Ավլումին, և Նանումին, և եղբայրորդոցն Յովհաննէս սարկաւագին, և Աւանիսին, և Թարխանին, և Մարտիրոսին, և քվերորդին Ամիրա սարկաւագն, առհասարակ յիշ(ե)ցէք ի Քրիստոս Աստուած զձեզ յ(ի)շէ։

Թ. 288բ.—Փառք եզակի տէրութեան և եռահիւսակ անձնաւորութեանն հաւր և որդոյ և հոգոյն սրբոյ յայժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից յամէն։

Որք զմտած աչս անաղատ և վճիտ ունիցին. երկնայնկատ դիտմամբ առեական լոյս. և իմանալեացն տեսարան նոցին ոչինչ է փութ բովանդակ. բնաւին ինչ որ աշխարհի. և որ ընդ հոսանուտ եղծանել ի բնութեան բերին այլ միանգամայն զհուր սիրոյն զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիւնս աւրըստաւրէ արծարծեն. ոգիս յանշիջանելի բորբոքմամբ հոգևորացն տուրևառութեամբ որով և լուսաւորին ըստ բանի Աստուածահայր մարգարէին որ ասէ պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց։

Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թվականութեան Հայոց ՌԺԲ (1563 թ.—Ն. Մ.) ի հայրապե(Թ. 289ա)տութեան Տեառն Գրիգորիսի կաթողիկոսի, ի յաթոռն Գանձասարայ, և ի դանութեամբ Ծահ Թահմազին, որդոյ Ծահ Իսմայելին։ Արդ գրեցաւ ի գաւառս Վակունիս, ի գեղս որ կոչի Հովատուս, որ Հընկուզ ակս անուանի, և դուռս Սրբոյ Եկեղեցւոյ, որ է մասն պանդեա Լևոն բժշկի. և մասն տապանակի և Մեռկեռիոսի զինուորի, և Ակոբա, և Ըստեփանոսի նախ(ա)վկայի։

Արդ գիրեցաւ ձեռամբ Հայրապետ աբեղայի, ձուլ և անարժանի, յիշատակ և ինձ, և եղբաւրս իմ Նահապետ քահանային. անջէնջ յիշատակ և փրկութիւն հոգոյ մերոյ։ Եւ ծնողաց մերոց՝ հաւրն մերոյ Խասիկին, և մաւրն մերոյ Համանին, և եղբարցս Կոստանդին, և Թորոսին, Ամիրին, և Գուլամիրին, և միւս մաւրն Մարիանին, և քվերացն Մարիանին, և Փաշին, և Խոնդաղին, Ավլղումին, և Նանումին, և հարսներոյն Մարիանին, Ուլուխաթունին, և ապաշխարող Մարիանին, և եղբերդստերաց Հռոմսիմին, և ամենիցուն, առհասարակ, և եղբայրորդացս, ամեն. յիշեցէք ի Քրիստոս Աստուած զձեզ յիշէ իւր յարքայութիւնս և զՄարտիրոս աբեսահիք Աստուծոյ։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Մագաղաթյա պահպանակի վրա)

Ես իմ պապենական հիմքի դրած քարն եմ սիրում, իմ պապե(ր)ի կյանքում թողած բարի լուրերի ձայնն եմ սիրում, նրա թոռների բոլոր գիտակից մարդկանց ձայնն եմ սիրում, սիրում եմ նրանց ովքեր սրտանց սիրում են իմ հայրական օջախի բոլոր մարդկանց:

Գրի առավ նախկինում Հաշումյան (ստորագրությունը), այժմ Հակոբյան (ստորագրությունը) Հակոբյան 30—10—75 թ.:

Թ. 1ա.—Որտիք Հայրաբետին, 1) Փեփոին, Սային Խոսրովը, Մարտիրոս, որտիք Գրիգորին, Խաչին, Ալիքսան, Սեթին, Բարսեղ, Մոսեսը: Որտիք Գասպարին 1) Մատոր, Առաքել Մուքան, Նիկալայ, Սային: Որտիք Աղաբեկին, Գրիգոր, Խաչատուր կատին համետարցին: Որտիք Մուքանին, Արութին, Մելիքսեթը, Ալիքսանը, Թարխանը: Որտիք Միրզին, Ակոբը, Սամսոնը, Ղասումը, Չարքազը: Որտիք Ղեվոնդին Արշակը, Ռուբենը, Մարտիրոսը:

Թ. 1բ.—Ի 1831 թուին մայիսի 29-ին գրեցաւ Յիսուսի Քրիստոսի ծառայ, ու սուրբ Գարմիր Աւետարանիս ծառայ Սարգիս Յարութեանս ու հարազատ որդիքն իմ Օհանն, Հաշումն ու Ղահրամանն: Որդիք Օհանին Հայրապետն, Գրիգորն, Գասպարն և Աւետիսն, ու կին Օհանին Նազլուն: Որդիք Հաշումին Յարութիւնն, Պողոսն ու Պետրոսն, և կին Հաշումին Հուռին: Որդիք Ղահրամանին Աղաբէկն, Միքայէլն ու Միրզան և Ղեւանդն, կին Ղահրամանին Թագուհին, և մայր սորա այսինքն Օհանին Խաթային որ է միշտ և հանապազ լուսաբար և ծառայող սուրբ Գարմիր Աւետարանիս:

Կին Յարութիւնին Թամամ, պաշ որդի նորա Աւանէս: Կին Պողոսին Անայ, որդի Պողոսին իշխան Մալիքսէթ և քորք Մինայ Դրինազ, Ազիզկոլ, կին Պետրոսին Կայանա, որդի Պետրոսին միամօր Մարկոս, օվ որ այս Սուրբ Աւետար(ան)ին ծառայի կամ այս գիրս ընթերցէ, միապերան ասէ՝ Աստուած ողորմի այս ի վերոյ գրեալ Սուրբ Աւետար(ան)ին ծառայող յիշեալ հանգուցեալ մարդկանց ու կանանց, և յիշողը լ(ի)նի արքայութեան մէջ:

Թ. 2ա.—18-ին Մարտի 1915 թուին ես Յակոբ Մ. Ղահր(ա)մանեանս լոյս առաւօթեան ժամի 9-ին Սուրբ Աւետարանը տուրս պկրեցի բակը, օրը շատ լաւ էր, օդը մաքուր, Պողոս ամուն ներկայութեամբ: 19 28 15 թուին:

III

Ով որ Սուրբ Կարմիր Աւետարան կամենայ տեղիս վերցնի պետկն մարմինը բաւէ:

Ակոբ Մ. Ղահր(ա)մանեան

1950 թ. Մայիսի 13-ին այցելեցին որպես հնութիւն ուսումնասիրելու:

Գրիգորյան Սարուխան

(Երկրորդ անուն-ազգանունը ջնջված է)

Խաչի որթի Սամսոն, ..., Տորզայ, Ստ(ե)փան, ...:

Ավետարանի այսու Լյովա Հայրապետյան այցելեց ապրիլի 24 կիրակի որը (ստորագրությունը):

Թ. 118բ.—Զառի Աղաբէգէնց Նախշունը:

Թ. 119ա.—Տիկրան, Տիկրան, Պոտրոս Գրիգորյան, Տիկրան:

Թ. 288բ.—Աստուած ողորմեսցի Մարիանին ապաշխարողին, եղբաւր դստերք ... տպիկ, Սառիկ, Խոնտաղանուին (Խանունբալին) և Համանին և Աղեսաբեթին, և Բիբումին, Ստրատիոսին, Թուղդամին և Զամանին, Մ(ա)րիանին, և Աբրահամին յիշեցէք:

Թ. 289ա.—և Գրիգորն ... հանգուցեալիքս. զԽաթունին, և Արզուքանին, և Աղեսաբեթին, ամեն:

Թ. 289բ.—Այլև յիշեսջիք ի Քրիստոս Աստուած զՋիլաւն, զՊապայն, զՅովանէսն, զԽասիկն, զԽաչնազարն, զՂարախանն, զԴուրուխանն, զփոգրիկ Պապայն, զՊէկնազարն, զԳրիգորն, և չբաւեպաշտ մայր նոցա զԳօզալն, և զդուստր իւր զՄարիամն, և զՓարին, և զամենայն արեան մերձաւորս սոցա զկենդանիս և զհանգուցեալս յիշեսջիք ի Քրիստոս Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութեան, Ամեն:

Դարձեալ յիշեցէք զՂասումջանն, Ղազարն:

Թ. 290բ.—(63)ումն էր յիշայտ(ակ) է Հարութի որթի Սարքիս, և իւր որթի Օհաննէս, նիր(այ)ր Հաշումին Ղարհման, սոցայ մայր Խաթային և տստեր նորայ Հայրայպետն:

Այլ յիշեցէք Քրիստոս Աստուած Մատօրին, և իւր որդի Արութինին, կն(ն)դանեաց և ննջեցելոց, ողորմայ ասացէք:

Վաքիլին ժամանակ գրեցաւ թիվ ՌԾՂԵ (1746 թ. —Ն. Մ.) էր: Ես անարժան Տէր Դավիթս գրեցէ, օվ որ կարդայ լի բերան ողորմայ ասէ Աստուած ողորմի ասողաց:

№ 464
ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 132:— **Պրակները՝** 18, յուրաքանչյուրը 12-ական թերթից է եղել սկզբում, սակայն գրեթե բոլոր պրակներից բազմաթիվ թերթեր են կտրատվել ու հանվել: Երկու պրակ միայն (ԺԲ և ԺԳ) ցարդ ամբողջական են մնացել: Առաջին երկու պրակները (Ա և Բ) լրիվ պակասում են, իսկ մնացածների վիճակը հետևյալն է. Գ, Դ և ԺԴ պրակները 10-ական թերթ ունեն, Ե, Թ և ԺԵ՝ 7-ական, Զ՝ 11, Է և ԺԷ՝ 6, Ը՝ 5, Ժ՝ 9, ԺԱ՝ 4, ԺԶ և ԺԸ՝ 8-ական թերթից են:— **Մեծությունը՝** 20×14,5×5,3 սմ.:— **Նյութը՝** հաստ մագաղաթ:— **Կազմը՝** արծաթապատ տախտակ:— Կոնակը ծածկված է կարմիր թավիշով, սակայն ժամանակի ընթացքում թավիշի կարմիր խավը մաշվել և թափվել է: Կոնակում կան հինգ մեծ գամեր: Կազմի երեսի կենտրոնում կա Քրիստոսի ոսկեգույն քանդակը, որի շուրջ ամրացված են երկու փոքր և 15 մեծ գունավոր հաստարակ քարեր:— **Պահպանակները՝** մեկական թերթ հաստարակ թուղթ:— **Վիճակը՝** անբավարար, բոլոր նկարները կտրատված ու հանված են, իսկ բոլոր պրակներն էլ պակասավոր են: —**Գրությունը՝** երկսյուն:— **Դատարկ թղթերը՝** միայն պահպանակի երկու թղթերը: —**Տողերը՝** 23:— **Գծումները՝** ճնշու-

նով:— **Գիրը**՝ բոլորգիր:— **Զարդագրություն**՝ ժամանակին ունեցել է շատ գեղեցիկ մանրանկարչություն, սակայն դժբախտաբար չարագործ մի ձեռք կտրատել և հանել է բոլոր ավետարանիչների և տերունական նկարները, խորաններն ու կիսախորանները: Մագաղաթյա արժեքավոր սույն ձեռագրում մնացել են միայն լուսանցազարդերն և ծաղկագրերը: Կան բազմաթիվ սիրուն թռչնագրեր և զարդագրեր, բույսեր և այլն: Հիսուսի, սրբերի, մարդկանց և կանանց նկարներ, ինչպես նաև օրհնության և խաչակնքման տեսարաններ: Օգտագործված են որդան կարմիր, ոսկեգույն, կապույտ, դեղին և այլ գույներ:— **Գրիչը**՝ անհայտ:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ծաղկողը**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 17-րդ դար:— **Վայրը**՝ անհայտ:— **Ծանոթություն**՝ սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացված Լոնդոնից՝ Հարություն Գալայճյանի կողմից: Վեհափառ Հայրապետն այն ձեռագրատուն հանձնեց 1977 թ. մարտի 26-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի երեսի կոնակում կպցված է մի մատենանիշ, 9×6,9 սմ. չափերով, ոսկեգույն հետևյալ արձանագրությամբ)

Ex Libris
PH. J.
VAN
ALFEN

(Սկզբի պահպանակի վրա գրված է)

Նորին Ս. Օծութիւն Տէր Տէր
Վազգէն Ա Ամենայն Հայոց
Կաթողիկոսին նուէր.
Ցարութիւն Գալայճեանին կողմանէ:
Լօնտօն 8 Յունիս 1975:

№ 465
ԽԱՉԱԳՐՈՒԹԻՒՆ

Թերթերը՝ 634:— **Պրակները**՝ 53, յուրաքանչյուրը 12-ական թերթից:— **Մեծությունը**՝ 20,1×17,2×4,7 սմ.:— **Նյութը**՝ բարակ, գծավոր դեղնած թուղթ:— **Կազմը**՝ լաթակազմ ստվարաթուղթ, կողքի կաշվի վրա գրված է «Հ. Զէրչեան—Զայնագրեալ շարական»:— **Պահպանակները**՝ մեկական հատ սև թուղթ:— **Վիճակը**՝ լավ:— **Գրությունը**՝ միասյուն:— **Դատարկ թղթերը**՝ 1ա—18բ, 622ա—634բ:— **Տողերը**՝ 11:— **Գծումները**՝ թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը**՝ նոտրգիր և հայկական նոր խազեր:—**Զարդագրություն**՝ չունի:—**Գրիչը**՝ շատ հավանաբար Վահրիճ վարդապետ Շահլամյանց:— **Պատվիրատուն**՝ անհայտ:— **Ժամանակը**՝ 20-րդ դար:— **Վայրը**՝ անհայտ:— **Ծանոթություն**՝ Վեհափառ Հայրապետը սույն մատյանը ձեռագրատուն հանձնեց 1976 թ. Դեկտեմբերի 25-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Այստեղ տրվում է միայն գլխավոր վերնագրերը)

Թ. 19ա.—Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին, Օրհնութիւն ԲՁ:
Թ. 27ա.—Կանոն Աստուածայայտնութեան Ա. աւուրն ԴԿ:
Թ. 33ա.—Կանոն Ծննդեան Բ. աւուրն ԴԿ:
Թ. 38ա.—Կանոն Ծննդեան Գ. աւուրն ԳԿ:
Թ. 45բ.—Կանոն Ծննդեան ԳԶ. Չորրորդի Աւուրն:
Թ. 51ա.—Կանոն Ծննդեան ԳԶ. Հինգերորդի Աւուրն:
Թ. 56բ.—Կանոն Ծննդեան, Վեցերորդի Աւուրն ԳԶ:
Թ. 61ա.—Կանոն Ծննդեան, Եօթներորդի Աւուրն ԲԶ:
Թ. 66ա.—Կանոն Ծննդեան, Ութերորդի Աւուրն ԴԶ:
Թ. 74բ.—Կանոն Բուն Բարեկենդանին ԴԿ:
Թ. 81ա.—Կանոն Բ. Կիւրակէի Աղուհացից ԴԶ:
Թ. 88ա.—Կանոն Գ. Կիւրակէի Աղուհացից ԳԿ:
Թ. 95ա.—Կանոն Դ. Կիւրակէի Աղուհացից ԳԶ:
Թ. 101բ.—Կանոն Ե. Կիւրակէի Աղուհացից ԲԿ:
Թ. 108ա.—Կանոն Զ Կիւրակէի Աղուհացից ԲԶ:
Թ. 113բ.—Կանոն Ղազարու Յարութեան ԱԶ:
Թ. 126բ.—ԲԿ. Համբարձի Ծաղկազարդի:
Թ. 130բ.—Կանոն Մեծի Երկուշաբթին. ԲԶ:
Թ. 137բ.—Կանոն Մեծի Երեքշաբաթի ԲԿ:
Թ. 143ա.—Կանոն Մեծի Չորեքշաբաթին ԳԶ:
Թ. 147ա.—Կանոն Մեծի Հինգշաբաթի ԳԶ:
Թ. 157ա.—Կանոն Մեծի Ուրբաթին. Հետևակ շարական ԴԶ:
Թ. 166բ.—Կանոն Մեծի Շաբաթի. Օրհն. ԲԶ:
Թ. 178ա.—Կանոն Սուրբ Զատկին ԱԶ:
Թ. 228ա.—Հարցք Յարութեան. Առաջին ձայն Ա:
Թ. 243ա.—Տէր յերկնից ԱԿ:
Թ. 257բ.—Տէր յերկնից ԲԶ:
Թ. 278ա.—Տէր յերկնից ԲԿ:
Թ. 291բ.—Տէր յերկնից ԳԶ:
Թ. 306ա.—Տէր Յերկնիկ ԳԿ:
Թ. 315բ.—Տէր յերկնից ԴԶ:
Թ. 362ա.—ԴԿ Կանոն Համբարձմանն Քրիստոսի. Հետևակ:
Թ. 370բ.—Կանոն երկրորդ Ծաղկազարդի. Օրհնութիւն ԴԿ:
Թ. 376ա.—Կանոն Հոգեգալստեան Ա. աւուրն. Օրհն. ԴԶ:
Թ. 385ա.—Կանոն Հոգեգալստեան Բ. աւուրն ԲԶ:
Թ. 390ա.—Կանոն Հոգեգալստեան Գ. աւուրն ԲԿ:
Թ. 395ա.—Կանոն Հոգեգալստեան Դ. աւուրն. Օրհն. ԳԶ:
Թ. 398բ.—Կանոն Հոգեգալստեան Ե. աւուրն. Օրհն. ԳԿ:
Թ. 402բ.—Կանոն Հոգեգալստեան Զ. աւուրն. Օրհն. ԴԶ:
Թ. 405բ.—Կանոն Հոգեգալստեան Է. աւուրն, Օրհնութիւն ԴԿ;

Թ. 410բ.—Կանոն Սրբոյ Տապանակին ԱԿ:
Թ. 415ա.—Կանոն Վարդավառի Ա. աւուրն. Հետեւակ շարական ԴԶ:
Թ. 426ա.—Կանոն Վարդավառի Բ. աւուրն ԲԿ:
Թ. 432բ.—Կանոն Վարդավառի Գ. աւուրն ԳԶ:
Թ. 439բ.—Կանոն Շողակաթին. Օրհն. և Հմրթի. ԳԶ:
Թ. 444բ.—Կանոն Վերափոխման Ա. աւուրն. Հետեւակ ԴԿ:
Թ. 452ա.—Կանոն Վերափոխման Բ. աւուրն ԴԿ:
Թ. 462ա.—Կանոն Վերափոխման Գ. աւուրն ԴԶ:
Թ. 466բ.—Կանոն Աւետեաց Աստուածածնին ԱԿ:
Թ. 473բ.—Կանոն Յովակիմայ և Աննայի. և նախատօնակ տօնից Ս. Աստուածածնի ԱԿ:
Թ. 479բ.—Հետեւակ Շարական Օրհնութեան ԱԶ:
Թ. 487բ.—Կանոն Ծննդեան Սուրբ Աստուածածնի ԳԿ:
Թ. 495ա.—Կանոն Նաւակատեաց Սրբոյ Խաչին ԲԿ:
Թ. 506բ.—Կանոն Խաչի Գ. աւուր ԴԶ:
Թ. 511բ.—Կանոն Դ. աւուր Խաչի ԲԿ:
Թ. 515ա.—Կանոն Խաչի Ե. աւուրն ԳԶ:
Թ. 520ա.—Կանոն Զ. աւուր Խաչի ԲԿ:
Թ. 523ա.—Կանոն Խաչի Է. աւուրն ԲԶ:
Թ. 529ա.—Օրհնութիւն Խաչի Ը. աւուր ԳԶ:
Թ. 541բ.—Կանոն Վարագայ Խաչի ԱԿ:
Թ. 545բ.—Կանոն Գիւտ Խաչին ԱԶ:
Թ. 604բ.—Ցանկ շարականաց՝ քաղուածովք:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 19ա.—(Կա մի փոքրիկ սև կնիք, 1,7×1,5 սմ. չափերով, որ հավանաբար ձեռագրի գրչի կնիքը պետք է լինի: Կնիքում կա հետևյալ անունն ու բվականը)

Վահրիճ վրդ.
Շահլամեանց
1896:

№ 466
ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 1002×10 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմը՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապաղաղ:— **Գծումներ՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ունի բազմաթիվ միջակ որակի նկարներ՝ Աստծու, սրբերի, առաքյալների, Հիսուսի և այլն: Կան թոչնագրեր, հրեշտակներ, թոչուններ, ծաղիկներ և այլն: Նկարներից մի քանիսը հետևյալներն են.— երեք սուրբ մանկունք, Ներսես Շնորհալի, 12 առաքյալները, Գառն Աստուծո, խաչված Քրիստոսը սկիհին մեջ, խաչելությունը, Քրիստոսի գերեզմանը, Մարիամ Աստվածածին, Հովհաննես Մկրտիչ, Ստեփաննոս Նախավկա, Գրիգոր Լուսավորիչ, Հայր Աբրահամ և այլն:— **Գրիչն և ծաղկողը՝** Խաչատուր քահանա:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1731 թ.:— **Վայրը՝** Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղամասի Ս. Կարապետ եկեղեցի:— **Մանրամասություն՝** Վեհափառ Հայրապետը սույն համայիլը ձեռագրատուն հանձնեց 1976 թ. նոյեմբերի 13-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համայիլը պարունակում է հետևյալ աղոթքները.—
1. Հաւատով խոստովանիմ.
2. Սուրբ Աստուած սուրբ և հզօր.
3. Թագաւոր հզօր ապաւէն ծարաւելոց.
4. Աղօթք Տէրունական.
5. Աղերս առ Սուրբ կուսն Մարիամ Աստուածածին.
6. Աղերս առ սուրբ Կարապետն Յովհաննէս.
7. Աղերս առ սուրբ Նախավկայն Ստեփաննոս.
8. Աղերս առ սուրբ Լուսաւորիչն Գրիգոր.
9. Աղօթք պահպանութեան.
10. Աղօթք գլխացաւի և աչից ցաւի.
11. Աղօթք չար նազարի և չար լեզուի.
12. Աղօթք վասն ճանապարհորդաց.
13. Աղօթք վասն չար պատահարաց.
14. Բարեխօսութեամբ սուրբ թագաւորացն.
15. Աղօթք զօրաւոր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն.
16. Աղօթք նորին Գրիգորի ասացեալ:
17. Մաղթանք սրբոյն Գէորգայ զօրաւարին.
18. Երգ առ սուրբ զօրավարն Սարգիս.
19. Սուրբ Աւետարանս Մատթէոսի.
20. Սուրբ Աւետարանս Մարկոսի.
21. Սուրբ Աւետարանս Ղուկասու.
22. Սուրբ Աւետարանս Յոհաննու.
23. Աղօթք վասն կապանաց դիւաց.
24. Աղօթք վասն զաւակ ծնութեան.
25. Աղօթք վասն վաճառականաց և ամենայն բանի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

(Բազմաթիվ աղոթքների վերջում գրված է հետևյալը)

Բարեխօս և օգնական լեր մայր Աստուծոյ ծառայիս քո ..... (սկզբում մի անուն է եղել, հավանաբար պատվիրատուին, որ հետագայում ջնջված է ուրիշի ձեռքով):

Հայր Աստուած արարիչդ ամենայնի երկնի և երկր(ի) ստեղծող, օգնական և պահապան լեր ծառայիս քո ..... ամեն:

Բարեխօս լերուք ծառայիս Աստուծոյ ..... ամեն:

Գառն Աստուծոյ որ բառնաս զմեղս աշխարհի. բարձ զմեղս ծառայիս քո .....:

Աղաչեմ զքեզ փրկիչ լեր ի մեղաց զծառայս քո ..... ամէն:

Եւս առաւել զծառայս քո ..... ամէն:

Եւ օգնական լեր ծառայիս Աստուծոյ .....:

..... և ամենայն չարէ պահեա զծառայս քո ..... ամեն:

Ծառայիս Աստուծոյ ..... և օգնական և պահապան եղերուք ամէն:

Զոր և աղերսանօք քերօքէիցն պահեսցէ և փրկեսցէ Աստուած զծառայս իւր .....:

..... պահեա և փրկեա որ ի դիմաց ծառայիս Աստուծոյդ ..... ամեն:

..... պարգևեսցէ (օ)գնական և պահապան լեր ծառայիս Աստուծոյ ..... ամէն:

Օգնական և պահապան լեր սուրբդ Սարգիս ծառայիս Աստուծոյ ..... ամեն:

Պահապան եղիցի ծառայիս Աստուծոյ ..... ամէն .....:

Օգնական եղիցի ծառայիս Աստուծոյ ..... ամէն:

(Այսպէս շարունակաբար բազմաթիվ տեղեր կրկնվում են նույն միտքն ու նույն բառերը):

Աստուած վայելումըն տա ցէ:
Այս հէմայիլս որ գրվա ծէ:
Հայրք և եղբարք որ սա առ ցէ:
Խաղաղութեամբ վայելես ցէ:
Ոչ չարիւրըն պատահես ցէ:
Խորհուրդ բարին կատարես ցէ:
Ի խորին ծերութիւն հաս ցէ:
Հայր մեղայիւ զմեզ յիշես ցէ:
Եւ յետ աստեացս որ նա ել ցէ:
Արքայութիւնն ժառանգես ցէ:

Գրեցաւ Հէմայիլս Ուսկուտար.
Ի դուռն Սուրբ Կարապետ Եկեղեցին
Ձեռամբ Խաչատուր Քահանայի
Որդի Տիրաց(ո)ւ Նօտար Պետրոսիս
Թվին ՌՃՁ (1731 թ.—Ն. Մ.) Յուլիսի Ա ամէն:

Վերջ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրի վերջում գրված է)
Ծառայիս Աստուծոյ Յակօբն:

№ 467
ՀԱՄԱՅԻԼ

Թերթերը՝ 2:— **Մեծությունը՝** 115×8,5 սմ. և 609×8,5 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Գծումները՝** չունի:— **Գիրը՝** նոտրգիր (երկու տեսակի):— **Զարդագրություն՝** կան մի քանի հասարակ Տերունական նկարներ, Հիսուս և Տիրամայրը տաճարում, նաև Ներսես Շնորհալու, 12 առաքյալների (2 անգամ), Խաչելության, Գրիգոր Լուսավորչի, Ստեփաննոսի, Հովհաննու Կարապետի, Հայր Աբրահամի, Գաբրիել հրեշտակապետի, Սուրբ Գեորգի, Սուրբ Սարգիս զորավարի նկարները և այլն:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Պաղտասար:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1683 թ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը սույն համայիլը ձեռագրատուն հանձնեց 1976 թ. նոյեմբերի 18-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համայիլը պարունակում է հետևյալ աղոթքները.—

1. Հաւատով խոստովանիմ.
2. Աղօթք վասն կապանաց դիւաց և կախարդաց և աղանդաւորաց և վասն դատաստանի (յ)աջողելոյ և վասն քաղցրութեան և երես բախտութեան ամէն:
3. Աղօթք սուրբ կոյս Մարիամ Աստուածածնին:
4. Աղօթք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին:
5. Աղօթք սրբոյն ընտեփաննոսի:

(Շարունակելի)